**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N «ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/10»**

ք.Երևան «02» «02» 2017թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ Հ.Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Հ.Գասպարյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին կամ մատուցել է անպատշաճ որակի ծառայություն,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայության արդյունքը և վարձատրել դրա համար, եթե մատուցված ծառայությունների որակը համապատասխանում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և ծառայությունները մատուցվել են սույն պայմանագրի 2.4.1 կետով սահմանված ժամկետում:

**2.3. Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4. Կատարողը պարտավոր է՝**

2.4.1. Սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ պատվիրատուի բանավոր կամ գրավոր հանձնարարությամբ՝ այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում, եթե Կատարողի բանավոր կամ գրավոր առաջարկությամբ և Պատվիրատուի բանավոր կամ գրավոր համաձայնությամբ այլ ժամկետներ չեն սահմանվել:

2.4.2. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Եթե կատարողը ծառայությունների մատուցելիս խոտանել է իրեն հանձնված գույքը, ապա պարտավոր է իր հաշվին վերականգնել այն: Ընդ որում խոտանված գույքի վերականգնման համար գործում է սույն պայմանագրի 2.1.2 և 2.4.1 կետերով սահմանված դրույթները:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2. Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1): Կատարողը Պատվիրատուին մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակները չներկայացնելը համարվում է մատուցված Ծառայության ժամկետի խախտում:

Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **360 000 (երեք հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի Հավելված №2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված

դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածներ 1; 2; 3 և 3.1 հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***ՊԱՏՎԻՐԱՏՈՒ***

**ՀՀ բնապահպանության նախարարություն**

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007854

900011007631

ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ

***Տ. Հովհաննիսյան***

(ստորագրություն)

***ԿԱՏԱՐՈՂ***

**«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ**

ք.Երևան, Կառավարական 3-րդ 2, 8-րդ հարկ

«Յունիբանկ» ՓԲԸ

ՀՀ 24124005544200

ՀՎՀՀ 02540474

«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

***Հ. Գասպարյան***

(ստորագրություն)

Կ.Տ.

| | | | |
|---|---|---|---|
| 59. | SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 512Մբ ՊիՍիԱյ-էքսպ(Nvidia GF GT 512Mb PCI Exp) կամ համարժեքը | հատ | 20.900 |
| 60. | SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 1Գբ ՊիՍիԱյ-էքսպ(Nvidia GF GT 1Gb PCI Exp) կամ համարժեքը | հատ | 26.400 |
| 61. | HDD փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի) | հատ | 0.550 |
| 62. | HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 500 ԳԲ 7200ոպմ (HDD 500GB 7200RPM), կամ համարժեքը | հատ | 34.500 |
| 63. | HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 1 ՏԲ 7200ոպմ (HDD 1 TB 7200RPM), կամ համարժեքը | հատ | 46.300 |
| 64. | HDD փոխարինում ներառյալ ՀԴ 2 ՏԲ ՍԱՏԱ, 7200ոպմ, 8ՄԲ (HDD 2 Tb SATA , 7200 rpm, 8MB),կամ համարժեքը | հատ | 66.500 |
| 65. | HDD փոխարինում ներառյալ ՀԴ 1 ՏԲ ՍԱՏԱ , 7200ոպմ (HDD 1 Tb SATA , 7200 rpm), կամ համարժեքը | հատ | 46.300 |
| 66. | HDD փոխարինում ներառյալ ՀԴ 500Գբ ՍԱՏԱ, 7200ոպմ (HDD 500 Gb SATA, 7200 rpm), կամ համարժեքը | հատ | 48.000 |
| 67. | CD-RW, DVD-RW նորոգում | հատ | 1.100 |
| 68. | CD-RW, DVD-RW փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի) | հատ | 0.550 |
| 69. | DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW), կամ համարժեքը | հատ | 12.100 |
| 70. | Սնուցման բլոկի նորոգում | հատ | 2.200 |
| 71. | Սնուցման բլոկի փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի) | հատ | 1.100 |
| 72. | Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պատյանի համար 350Վտ (Power suply unit for P4 Case 350w), կամ համարժեքը | հատ | 5.390 |
| 73. | Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պատյանի համար 450Վտ (Power suply unit for P4 Case 450w), կամ համարժեքը | հատ | 7.700 |
| 74. | Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պատյանի համար 550վ (Power suply unit for P4 Case 550W ), կամ համարժեքը | հատ | 10.450 |
| 75. | Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պատյանի համար 650վ (Power suply unit for P4 Case 650W ), կամ համարժեքը | հատ | 16.500 |
| 76. | Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պատյանի համար 850վ (Power suply unit for P4 Case 850W ), կամ համարժեքը | հատ | 19.250 |
| 77. | Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պատյանի համար 1000վ (Power suply unit for P4 Case 1000W ), կամ համարժեքը | հատ | 24.200 |
| 78. | Ցանցային քարտի տեղադրում (առանց պահեստամասերի) | հատ | 0.550 |
| 79. | Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Օրանժ (Orange NIC 10/100),կամ համարժեքը | հատ | 3.300 |
| 80. | Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Դ-լինկ (D-link 10/100), կամ համարժեքը | հատ | 3.080 |
| 81. | Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000),կամ համարժեքը | հատ | 5.500 |
| 82. | Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ վայրլեսս 11մբ(Wireles NIC 11mb), կամ համարժեքը | հատ | 11.000 |
| 83. | Արտաքին ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000), կամ համարժեքը | հատ | 7.300 |
| 84. | Մարտկոց համակարգչի | հատ | 0.500 |
| | **Նոթբուքի վերանորոգում** | | |
| 85. | CPU, RAM փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի) | հատ | 2.200 |
| 86. | HDD փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի) | հատ | 2.200 |
| 87. | HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 80գբ 5400 նոթբուքի համար (TOSHIBA,80GB,5400 for notebook), կամ համարժեքը | հատ | 29.700 |
| 88. | HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 160գբ 5400ոպմ նոթբուքի համար (TOSHIBA 160GB 5400RPM for notebook), կամ համարժեքը | հատ | 31.900 |
| 89. | HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 250գբ 5400ոպմ նոթբուքի համար (TOSHIBA 250GB 5400RPM for notebook),կամ համարժեքը | հատ | 35.750 |
| 90. | HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 320գբ 5400ոպմ նոթբուքի համար (TOSHIBA 320GB 5400RPM for notebook), կամ համարժեքը | հատ | 39.270 |
| 91. | RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 512ՄԲ (SODIMM DDR2 512MB ) կամ համարժեքը | հատ | 15.400 |
| 92. | RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 1ԳԲ (SODIMM DDR2 1GB ) կամ համարժեքը | հատ | 22.000 |
| 93. | RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 2ԳԲ (SODIMM DDR2 2GB ) կամ համարժեքը | հատ | 22.550 |
| | **Մոնիտորի վերանորոգում** | | |
| 94. | TDKC փոխարինում առանց TDKC | հատ | 3.300 |
| 95. | ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 15" | հատ | 8.800 |
| 96. | ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 17" | հատ | 9.900 |
| 97. | ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 19" | հատ | 11.000 |



| | | | |
|---|---|---|---|
| 98. | ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 20" | հատ | 15.400 |
| 99. | ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 22" | հատ | 18.480 |
| 100. | ԼՍԴ-ի մատրիցայի փոխարինում | հատ | 7.700 |
| 101. | Վերանորոգում ( ֆոկուսի կարգավորում,գունահամատեղող մեխանիզմի կարգաբերում ) | հատ | 3.080 |
| 102. | Վերանորոգում ( վնասված մասերի փոխարինում ) | հատ | 3.520 |
| | **Անխափան սնուցման սարքի վերանորոգում** | | |
| 103. | Ղեկավարող սալիկի վերանորոգում | հատ | 1.980 |
| 104. | Մարտկոցի փոխարինում (առանց Մարտկոցի) | հատ | 1.100 |
| 105. | Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/4Ա | հատ | 8.800 |
| 106. | Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/7Ա | հատ | 9.240 |
| 107. | Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/17Ա | հատ | 26.000 |
| 108. | Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/24Ա | հատ | 35.000 |
| | **Սկաների վերանորոգում** | | |
| 109. | Վերանորոգում (առանց պահեստամասերի) | հատ | 2.970 |
| 110. | Լամպի փոխարինում (առանց պահեստամասերի) | հատ | 1.100 |
| 111. | Լամպի փոխարինում ներառյալ լամպը Ա4 | հատ | 19.800 |
| | **Համակարգչային ցանցի վերանորոգում** | | |
| 112. | Սվիչ տեղադրում (առանց պահեստամասերի) | հատ | 1.320 |
| 113. | Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 8 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 8 PORT), կամ համարժեքը | հատ | 17.500 |
| 114. | Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 16 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 16 PORT), կամ համարժեքը | հատ | 47.300 |
| 115. | Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 24 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 24 PORT), կամ համարժեքը | հատ | 64.000 |
| 116. | Ցանցային ուղղորդիչ Միկրոտիկ RB750 կամ համարժեքը | հատ | 30.500 |
| 117. | Ցանցային ուղղորդիչ Միկրոտիկ RB1100 AHx2 կամ համարժեքը | հատ | 242.000 |
| 118. | Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 16 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 16 PORT),կամ համարժեքը | հատ | 35.200 |
| 119. | Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 24 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 24 PORT),կամ համարժեքը | հատ | 80.000 |
| 120. | Մալուխի անցկացում (գծամետր առանց մալուխի) | հատ | 0.165 |
| 121. | Մալուխի անցկացում ներառյալ Մալուխի գինը (գծամետր) | հատ | 0.275 |
| | **Լազերային տպիչի վերանորոգում** | | |
| 122. | Լիցքավորում (լազերային տպիչների առանց տոների) | հատ | 0.990 |
| 123. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1005/1006/1505(Քենոն 712)/1505,կամ համարժեքը (HP LJ 1005/1006/1505 (Canon 712)/1505, կամ համարժեքը | հատ | 1.430 |
| 124. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 5L/6L (Քենոն ԵՊ Ա)/1100 (Քենոն ԵՊ 22), 1200 (Քենոն ԵՊ 25) /1300/1150/1160/1320/2015, կամ համարժեքը (HP LJ 5L/6L(Canon EP A)/HP LJ 1100(Canon EP 22) /HP LJ 1200(Canon EP 25)/1300/1150/1160/1320/2015), կամ համարժեքը | հատ | 1.320 |
| 125. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քենոն ԵՊ 26/27/Ֆիքս9/10 (Canon EP 26/27,FX9/10), կամ համարժեքը | հատ | 1.320 |
| 126. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 (HP LJ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 Q2612A (Canon 303/703)) 140 գրամ, կամ համարժեքը | հատ | 1.800 |
| 127. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 5Պ/6Պ (HP LJ 5P/6P), կամ համարժեքը լազերային տպիչի համար | հատ | 1.540 |
| 128. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4000/4050 (HP LJ 4000/4050), կամ համարժեքը լազերային տպիչի համար | հատ | 3.300 |
| 129. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2100/2200 (HP LJ 2100/2200), կամ համարժեքը լազերային տպիչի համար | հատ | 3.300 |
| 130. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2300 (HP LJ 2300), կամ համարժեքը լազերային տպիչի համար | հատ | 3.300 |
| 131. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոներըՀՊ ԼՋ 3005 (HP LJ 3005), կամ համարժեքը | հատ | 3.300 |
| 132. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2420/2430 (HP LJ 2420/2430), կամ համարժեքը լազերային տպիչի համար | հատ | 3.300 |
| 133. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4L/4Պ (HP LJ 4L/4P), կամ համարժեքը լազերային տպիչի համար | հատ | 2.200 |
| 134. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4/4+/5 (HP LJ 4/4+/5), կամ համարժեքը լազերային տպիչի համար | հատ | 2.200 |
| 135. | Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4100 (HP LJ 4100), կամ համարժեքը լազերային տպիչի համար | հատ | 3.300 |

Հավելված №2
«02» «02» 2017թ. կնքված
№ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/10 պայմանագրի

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ բնապահպանության նախարարություն** | **«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ** |
| ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք.Երևան, Կառավարական 3-րդ շ, 8-րդ հարկ |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Յունիբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011007854 | ՀՀ 24124005544200 |
| 900011007631 | ՀՎՀՀ 02540474 |
| ՀՎՀՀ 02507198 | |
| ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ | «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն |
| Ա. Մինասյան | Հ. Գասպարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

| Ծրագրի անվանումը | հ/հ | Գնման առարկայի՝ ծառայության անվանումը | Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝(ըստ ամիսների աճողական կարգով) | | | | | | | | | | | | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| Նախարարության աշխատակազմ (900011007854) | 1. | Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայություններ | - | 150.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 |
| Նախարարի աշխատակազմ (900011007631) | 2. | Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայություններ | - | 30.0 | 60.0 | 60.0 | 60.0 | 60.0 | 60.0 | 60.0 | 60.0 | 60.0 | 60.0 | 60.0 | 60.0 |
| | | **ԸՆԴԱՄԵՆԸ** | - | **180.0** | **360.0** | **360.0** | **360.0** | **360.0** | **360.0** | **360.0** | **360.0** | **360.0** | **360.0** | **360.0** | **360.0** |

Հավելված №3
«02» «02» 2017թ. կնքված
№ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/10 պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011007854
900011007631
ՀՎՀՀ 02507198

**ԿԱՏԱՐՈՂ**
«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Կառավարական 3-րդ շ, 8-րդ հարկ
«Յունիբանկ» ՓԲԸ
ՀՀ 24124005544200
ՀՎՀՀ 02540474

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«____» «____________ » 2017թ.

*Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝* ***Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր***
*Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «02» «02» 2017թ.*
*Պայմանագրի համարը՝* ***№ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/10***
*Պատվիրատուն՝ ի դեմս* ***ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության ֆինանսահաշվապահական և տնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Լ.Սիմոնյանի,*** *և Պայմանագրի կողմն՝ ի դեմս* ***«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ.Գասպարյանի,*** *հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N_եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
____________
ստորագրություն
____________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
____________
ստորագրություն
____________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №3.1
«_02_» «___02___» 2017թ. կնքված
№ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/10 պայմանագրի

**ԱԿՏ N**
**Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև «_02_» «___02___» 2017 թվականին կնքված №ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-17/10 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «______» «____________» 2017 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն